

ՊԱՐԳԵՎԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ.
ԻՈՍԻՖ ԿՈԲԶՈՆԸ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ
ՈՒ ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՀԵՏ

## Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ «Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆ ՀԱՆՁՆԵՑ ԻՈՍԻՖ ԿՈԲԶՈՆԻՆ

Մեկ տարի առաջ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Սրբատառ Կոնդակով ՌԴ պետական և հասարակական գործիչ Իոսիֆ Կոբզոնին շնորհվել էր Հայ Առաքելական Եկեղեցու «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշան՝ Հայաստանին և հայ ժողովրդին մատուցած ծառայությունների համար:

Դեկտեմբերի 3-ին Ս. Էջմիածնում Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Սրբատառ Կոնդակը և շքանշանը հանդիսավորապես հանձնեց մեծարյալին:

«Դուք շատ անգամներ եք եղել Հայաստանում, սակայն միշտ էլ սպասված ու ցանկալի հյուր եք բիբլիական Արարատի Երկրում: Մեծ է մեր ժողովրդի հարգանքն ու համակրանքը Ձեր նկատմամբ՝ թե՛ որպես տաղանդավոր երգչի ու արվեստագետի և թե՛ որպես պետական ու հասարակական գործչի: Հայաստանում սիրով են հիշում Ձեր բոլոր այցելությունները և երախտագիտության զգացումով՝ ի նպաստ մեր ժողովրդի կազմակերպած բարեգործական համերգներն ու իրականացրած ծրագրերը: Ձեր վերջին այցելության ընթացքում նույնպես Ձեր օգտակարությունը բերեցիք մեր ժողովրդին՝ դեկտեմբերի 7-ին, 1988-ի երկրաշարժի հիշատակի օրվա առիթով, վերստին լինելով աղետյալ շրջաններում և դժվարությունների մեջ ապրող նրա բնակիչներին նոր հույսեր ու քաջալերություն հավելելով»,- ասվում է Հայրապետական Սրբատառ Կոնդակում:

Իոսիֆ Կոբզոնը շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին իրեն նման բարձր պարգևին արժանացնելու համար՝ խոստանալով ամեն ինչ անել՝ է՛լ ավելի ամրապնդելու համար ռուս-հայկական դարավոր բարեկամությունը:

Շքանշանի հանձնման արարողությանը ներկա էին թեմակալ առաջնորդներ, Մայր Աթոռի միաբաններ, հյուրեր Մոսկվայից:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*